Թ

ԵԿԵՂԵՑԻՔ ԵՒ ՈՒՍՈՒՄՆԱՐԱՆՔ ՆԱԽԻՋԵՒԱՆՈՒ

Նախիջևան չէն և պայծառ վեց եկեղեցի ունի քաղքին մէջ. Ս. Լուսաւորիչ մայր եկեղեցին իւր ընդարձակութեամբ և ճոխութեամբ կը գերազանցէ զայլս. 'ի միջավայր քաղքին շինուած է՝ մեծագործ և հոյակապ, չորս կողմը ծառաստան, զոր կը շրջապատեն դրսէն երկաթեայ ճաղք, լայնանիստ է կաթողիկէն, արտաքոյ և 'ի ներքոյ նկարեալ. բարձրարերձ է զանգակատունն՝ որ մտից դաւթին վրայ կ'ամբառնայ։ Եկեղեցեաց ճարտարապետութիւնն առ հասարակ տեղական կամ ռուսական է, աւելի պիտոյից և յարմարութեան ուշ դարձուած է՝ քան թէ գեղեցկի և վայելչութեան. այս դատողութիւնս բոլորովին սխալ կը լինի գերեզմանոցի Ս. Կարապետ Նորաշէն եկեղեցւոյ մասին, որոյ վրայ առանձին խօսիլ հարկ է։ Քաղաքիս եկեղեցիք ամէնք ալ ունին մտից առաջ մեծամեծ դաւիթներ, որոց վրայ կը բարձրանան զանգակատունքն. յաճմէ պահարան, յորում կը պահուին ընդ այլ եկեղեցական սպասուց՝ բաղմաթիւ գրչագիրք. 'ի ձախմէ ժամակոչի կամ պահապանի համար սենեակ մի։ Եկեղեցեաց ներսի կողմէն, մտից դրանց վրայ կան վերնատուններ. ընդարձակ է եկեղեցեաց մէջն և առհասարակ մաքուր կը պահուին. դասը զատուած է եկեղեցիէն, խորանները միշտ բարձրարերձ խաչկաներով զարդարուած են, ուր բաց 'ի խորանին պատկերէն, այլ շատ պատկերներ կան, յորոց ոմանք